



Երեց Ֆրանսիսկո Ջ. Վինաս
Յոթանասունհից

Արդարությանը պատկանող բաները

Որպես ծնողներ և ղեկավարներ մենք պետք է հետևենք մեր անդամներին և ընտանիքներին, օգնելով նրանց հեռու մնալ սցենարից, ինչը կարող է նրանց տասնել դեպի հոգևոր մահ:

Կարդալիցություն և Ուխտերում մեզ ասվում է, որ Աստուծո ծառաների վկայությունից հետո, կհետևեն վկայություններ երկրաշարժների և այլ աղետների մասին: «Եվ բոլոր բաները կլինեն խառնաշփոթության մեջ. և անկասկած, մարդկանց սրտերը կնվաղեն. քանզի երկյուղը կպատի բոլոր մարդկանց» (Վեհ. 88.91; տես նաև հատվածներ 88-90):

Որպես Կարիքյան կղզիների Տարածքի Նախագահության անդամ են անձնական վկայություն ունեն հավատարիմ Սրբերի մասին, որոնք վախճ փոխարինել են հավատքով: Հաիթիում սովորած դասերը կարող են նմանեցվել Մորմոնի Գրքի պատկերներին:

Այդ սաստիկ կործանման տպավորությունը ինձ հիշեցրեց Ալմայի 28-րդ գլխի խոսքերը. «Մա մի ժամանակ էր, երբ ամբողջ երկրով մեկ՝ Նեփիիի ողջ ժողովրդի մեջ, լավում էր մի մեծ սուգ ու շիվան» (Ալմա 28.4):

Քառասուներկու անդամ նույնպես գովելիցին: Իսկ նրանց ընտանիքները և ընկերները «սգում են իրենց ազգականների կորուստը, սակայն նրանք ցնծում են և հրճվում հույսով,

և նույնիսկ զիտեն, Տիրոջ խոստումների համաձայն, որ նրանք բարձրացվել են՝ ապրելու Աստուծո աջ կողմում, երբեք չվերջացող երջանկության մի վիճակում» (Ալմա 28.12):

Անմիջապես օգնություն ուղարկվեց Եկեղեցու կողմից անդամներին և ոչ-անդամներին, և բաշխվեց տեղական քահանայության և Սփոփող Միության ղեկավարների առաջնորդությամբ: Նրանք ոչ միայն ստացան բժշկական օգնություն, սնունդ, ջուր և հիմնական այլ պարագաներ, այլ նաև խորհուրդ, ուղղություն և սփոփանք իրենց տեղական ղեկավարների կողմից: Նրանք ունեն ողջ աշխարհի Եկեղեցու անդամների աջակցությունը, որոնք «սգում են նրանց հետ, ուրքեր սգում են. Այո, և մխիթարում են

նրանց, ուրքեր կարիք ունեն մխիթարության» (Մոսիա 18.9):


Տարբեր մարգարեներ տարբեր ժամանակներում մեզ նախազգուշացրել են մեկ այլ ողբերգության մասին, որն ավելի քիչ նկատելի է, սակայն ոչ պակաս կարևոր, և դա հետևյալն է. «մի տուկալի մահ, [որը] գալիս է ամբարիշտների վրա, քանզի նրանք մեռնում են արդարությանը վերաբերող բաների նկատմամբ. Քանզի նրանք անմաքուր են, և ոչ մի անմաքուր բան չի կարող ժառանգել Աստուծո արքայությունը» (Ալմա 40.26):

Նեփին ուսուցանել է այս սկզբունքը իր եղբայրներին, ասելով նրանց, որ նրանք, ուրքեր «մեռնեն իրենց ամբարշտության մեջ, նրանք պիտի նույնպես վտարված լինեն, ինչ վերաբերում է բաներին, որոնք հոգևոր են, որոնք պատկանում են արդարությանը» (1 Նեփի 15.33):

Մամունի Լամանացի մարգարեն ուսուցանում էր, որ «ով որ ապաշխարի, նա չի կտրվի և չի գցվի կրակը. Բայց ով որ չապաշխարի, կկտրվի և կգցվի կրակը. և գալիս է նրանց վրա կրկին մի հոգևոր մահ, այո, մի երկրորդ մահ, քանզի նրանք կրկին կտրված են, ինչ վերաբերում է արդարությանը պատկանող բաներին» (Հելլաման 14.18):

Հոգևոր բաների համար մահանալու ողբերգությունը ավելի մեծ ազդեցություն ունի նրանց վրա, ուրքեր «մի ժամանակ լուսավորված են եղել Աստուծո Հոգով, և ունեցել են մեծ գիտություն՝ արդարությանը պատկանող բաների վերաբերյալ, և հետո հեռացել են՝ ընկնելով մեղքի և օրինազանցության մեջ, նրանք դառնում են ավելի կարծրացած, և այսպես, նրանց վիճակը դառնում է ավելի վատ, քան, եթե նրանք երբեք իմացած չլինեին այս բաները» (Ալմա 24.30):

Որպես ծնողներ և ղեկավարներ մենք պետք է հետևենք մեր անդամներին և ընտանիքներին, օգնելով նրանց հեռու մնալ այն սցենարից, ինչը կարող է նրանց տանել դեպի հոգևոր մահ: Մենք նաև աշխատում ենք փրկել նրանց, ուրքեր այժմ մահացած են հոգևոր բաների համար, և օգնել նրանց «վերստին ծնվել, այո, Աստուծոց ծնվել, իրենց մարմնական ու ընկած վիճակից փոխված դեպի



արդարության մի վիճակի, փրկագն-վելով Աստծո կողմից, դառնալով նրա որդիներն ու դուստրերը» (Մոսիա 27.25):

Նրանց հոգևոր բուժումը, ուլքեր մահացել են արդարությանը պատկանող բաների հանդեպ, տնդի է ունենում Քավության գործությամբ, դնայի ճշմարտությունը դարձի գալու և արդարության սկզբունքներին հավատարիմ մնալու միջոցով:

Մեր անդամներին և ընտանիքներին արդարությանը պատկանող բաների մասին սովորեցնելը կարևոր է տևական դարձի համար, քանի որ դա նրանց օգնում է ձեռք բերել ճիշտ գիտելիք Տիրոջ պատվիրանների, ավետարանի սկզբունքների և վարդապետությունների և այն պահանջների և ծեսերի մասին, որոնց մենք պետք է հնազանդվենք Տիրոջ արքայությունում փրկություն ստանալու համար:

Սուրբ գրություններում կան բազմաթիվ օրինակներ, որոնք հաստատում են «արդարությանը վերաբերող բաների» ուսուցանման կարևորությունը, օգնելով ձեռք բերել տևական դարձ: Լամանացիներին ավետարանը քարոզող Ամմոնի և նրա եղբայրների մասին պատմության մեջ մենք կարդում ենք. «Եվ Ամմոնը քարոզում էր թագավոր Լամոնիի ժողովրդին, և նրանք այնպես, որ նա սովորեցրեց նրանց ամենը, ինչ վերաբերում է արդարությանը պատկանող բաներին (Ալմա 21.23):

Մենք կարող ենք տեսնել արդարությանը վերաբերող բոլոր բաները ջանասիրաբար ուսուցանելու արդյունքները, շարունակելով կարդալ 23 գլուխը, որտեղ ասվում է. «Որ բոլոր նրանք, ուլքեր հավատացին, կամ բոլոր նրանք, ուլքեր բերվեցին ճշմարտության իմացությանը, ... դարձի եկան առ Տերը, երբեք չհեռացան» (Ալմա 23.6):

Երբ Ալմա Կրտսերը հիմնեց Եկեղեցին, նա նվիրաբերեց արժանի տղամարդկանց՝ լինելու նրանց քահանաները և ուսուցիչները, ուլքեր «հսկում էին իրենց ժողովրդի վրա և սնուցում էին նրանց արդարությանը պատկանող բաներով» (Մոսիա 23.18):

Ծնողները էական դեր են կատարում, օգնելով իրենց երեխաներին



հասկանալ արդարությանը վերաբերող բաները: Մորմոնի Գրքում մենք կարդում ենք, որ Ալմա Կրտսերը, վշտանալով տիրող ամբարշտության, պատերազմների և հակառակությունների համար և ճնշված լինելով իր ժողովրդի կարծրասրտությամբ, «կարգադրեց, որ իր որդիները հավաքվեն միասին, որպեսզի նա կարողանար նրանցից ամեն մեկին առանձին տալ իր հանձնարարությունը, *սպիտակաթուղթները պատկանող բաների վերաբերյալ*» (Ալմա 35.16, շեշտադրումն ավելացված է):

Հետաքրքիր է նկատել, որ նա ուսուցանում և իր զավակներին խրատում էր առանձին, հարմարեցնելով իր ուսուցումը յուրաքանչյուր որդուն՝ ըստ վերջինիս կարիքների: Նա վկայություն էր բերում և ուսուցանում նրանց վարդապետությունը և սկզբունքները, պատրաստելով նրանց քարոզել նույն սկզբունքները ուրիշներին:

Այնպիսի մի ժամանակ, երբ ընտանիքը չարի ուժերի գրոհման տակ է, և երբ այն պայմանները, որոնցում մենք ապրում ենք, այդքան էլ չեն տարբերվում նրանցից, որում Ալման էր, Առաջին Նախագահությունը և Տասներկուսի Քվորումը սահմանել են «Ընտանիք» Հայտարարություն աշխարհին՝ հռչակագրում, որ «ծնողները սուրբ պարտականություն են կրում՝ մեծացնելու իրենց երեխաներին սիրո և արդարության մեջ» (*Liabona*, Oct. 2004, 49).

Դա ներառում է երեխաներին սնուցումը, աջակցությունը և

ուսուցանումը արդարությանը պատկանող բոլոր բաներում, որպեսզի նրանք մնան հաստատուն, իրենց «մեջքը ճշմարտությամբ գոտևորած, արդարության լանջապանակը հագած, և [իրենց] ոտքերը խաղաղության ավետարանի պատրաստությամբ պատած» (Վեհո 27.16):

Ինչպես Ալմայի ժամանակներում, մեր ղեկավարները նույնպես հետևում են Եկեղեցու անդամներին և սնուցում նրանց *սպիտակաթուղթները վերաբերող բաներով*: Այդ բաները կօգնեն մեզ հասնել տևական դարձին: «Ղեկավարներին ուսուցանելու շեշտադրումները» աշխատանքում, որը վերանայվել է 2009թ. դեկտեմբերի 10-ին, Առաջին Նախագահությունը և Տասներկուսի Քվորումը խնդրում են, որ և՛ քահանայության և՛ օժանդակ կազմակերպությունների ղեկավարները խրախուսեն ընտանիքի յուրաքանչյուր անդամի, ծնողներին և երեխաներին ուսումնասիրել սուրբ գրությունները, կանոնավոր աղոթեն և ապրեն Հիսուս Քրիստոսի ավետարանով (Առաջին Նախագահության նամակ, 15 դեկտ., 2009թ.):

Սուրբ գրություններն ուսումնասիրելը, կանոնավոր աղոթելը և Հիսուս Քրիստոսի ավետարանով ապրելը արդարության գործեր են, և Տերը բացել է այս հիանալի խոստումը. «որ նա, ով արդարության գործեր է անում, պիտի ստանա իր վարձքը, այսինքն՝ խաղաղություն այս աշխարհում և հավերժական կյանք գալիք աշխարհում» (Վեհո 59.23):

Ռրպեսզի ավելի արդյունավետ ուսուցանենք *սրդադրությանը վերաբերող բաները*, կարևոր է հասկանալ, որ, բացի տեղեկություն տալուց, մենք պետք է խթանենք հայտնությունը: Այդպիսով, անձը, որն ուսուցանվում է, կարող է այդ սկզբունքներն ինքնուրույն իմանալու ցանկություն զգալ:

Տերը հայտնել է Հայրում Սմիթին նրա եղբայր Մարգարե Չոզեֆ Սմիթի միջոցով:

«Ես քեզ բաժին պիտի հանեմ իմ Հոգուց, որը կլուսավորի քո միտքը, որն ուրախությունով կլցնի քո հոգին:

Եվ այն ժամանակ դու կիմանաս, կամ դրանով դու կիմանաս բոլոր բաները, ինչ-որ կցանականաս ինձանից, որոնք վերաբերում են արդարության բաներին, հավատքով հավատարիվ ինձ, որ դու պիտի ստանաս» (ՎեՆու 11.13-14):

Եզրափակելով, սուրբ գրությունները մեզ նախազգուշացնում են արդարությանը պատկանող բաների նկատմամբ մահանալու վտանգի մասին և այն լուրջ հետևանքների մասին նրանց համար, ովքեր լուսավորված լինելով Աստծո Հոգու կողմից, ընկնում են մեղքի և մեղսագործության մեջ:

Սրդադրությանը վերաբերող բաները ուսուցանելը կարևոր բաղադրիչ է օգնելու մարդկանց ձեռք բերել ճշմարտության գիտելիքը, դարձի գալ և մինչև վերջ հաստատուն մնալ Քրիստոսի հանդեպ հավատքում:

Ծնողները սուրբ պարտականություն ունեն ուսուցանելու իրենց երեխաներին *սրդադրությանը վերաբերող բաների* մասին: Ղեկավարները և ուսուցիչները կարող են հետևել իրենց անդամներին և սնուցել իրենց պատասխանատվության տակ գտնվողներին, ջանասիրաբար ուսուցանելով նրանց արդարությանը վերաբերող բոլոր բաները:

Դրան ավելի արդյունավետ կարելի է հասնել, եթե հայտնություն է խթանվում ուսուցման ընթացքում, այդպիսով ստեղծելով մարդկանց մոտ Աստծո Հոգով ուսուցանվելու ցանկություն: Ապա, երբ նրանք գործածեն հավատք, Հոգին կարող է նրանց հայտնի դարձնել արդարությանը վերաբերող բաները: Այս բաների մասին ես վկայում եմ Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■



Երեց Նիլ Լ. Անդերսոն

Տասներկու Առաքյալների Բվորումից

Պատմիր ինձ Հիսուսի մասին

Առ Հիսուս Քրիստոս գորել, անձնական հավատքը կրատորաստի նրանց այն խնդիրներին, որոնց նրանք անկասկած կհանդիպեն:

Երբ ձեզ հանձնարարված է խոսել գերագույն համաժողովի վերջին նիստին, դուք լսում եք ամեն մի խոսքին, հետևելով, թե ձեր ելույթի որ մասը կասվի ձեզանից առաջ: Չկան հանձնարարված թեմաներ, ոչ էլ ընդհանուր թեմաներ: Անշուշտ, Տիրոջ ճանապարհը միշտ լավագույնն է: Նա վերցնում է ամեն խոսնակի անհատական աղոթքով արված ջանքերը և միավորում հոգևոր սիմֆոնիայի մեջ, որը լի է հայտնությամբ և զորությամբ: Կրկնվող թեմաները, սկզբնունքը սկզբունքի վրա, մարգարեկան նախազգուշացումները, ոգեշնչող խոստումները՝ աստվածային ներդաշնակության հրաշք: Ես վկայում եմ, որ այս համաժողովի ընթացքում մենք լսեցինք և զգացինք Տիրոջ միտքը և կամքը:

Նախագահ Թոմաս Ս. Մոնտոնը նկարագրել է աճող սերունդը որպես «երբևիցե ամենալավը»¹ և ասել է մեր երիտասարդներին. «Դուք եկել եք այս երկիր փառավոր ժամանակ: Չեր առջև հնարավորությունները գրեթե անսահման են»:² Բայց նա նաև նախազգուշացրել է. «Մենք երկիր ենք ուղարկվել անհանգիստ ժամանակներում»:³ Մաթյուստրելիության ժամանակ է,

երբ հասարակությունը հիմնականում հանգիստ անտեսում և խախտում է Աստծո օրենքները»:⁴ Մենք շրջապատված ենք այնքան շատ բաներով, որոնք ստեղծված են մեր ուշադրությունը շեղելու համար: «Հակառակորդը ... օգտագործում է հնարավոր ցանկացած միջոց, որպեսզի մեզ զգի իր խաբեության ցանցը»:⁵

Մեր ձեռքերում մենք պահում ենք աճող սերունդը: Նրանք գալիս են այս երկիր կարևոր պատասխանատվություններով և հոգևոր մեծ ունակություններով: Մենք չենք կարող թույլ տալ մեզ անպատասխանատու լինել նրանց պատրաստելիս: Ռրպես ծնողներ և ուսուցիչներ մեր խնդիրն է ոչ թե նրանց հոգիներում հոգևոր առանցք ստեղծելը, այլ ավելի շուտ ուժեղացնել նրանց հոգևոր առանքի կրակը, որն արդեն իսկ վառված է եղել նախաներկային հավատքով:

Այսօր ես ցանկանում եմ շեշտել Երեխաների Միության նրբում հնչող երեխայի խնդրանքը:

*Պատմիր ինձ Հիսուսի մասին, ես սիրում եմ լսել: Այն, ինչ կխնդրես նրան պատմել ինձ, եթե ես սցառնող լինեմ»:*⁶